ԲԱՆԱՎԵՃԵՐ ԵՎ ՔՆՆԱՐԿՈՒՄՆԵՐ
ДИСКУССИИ И ОБСУЖДЕНИЯ

ԱՐԴՅՈՔ ՄԻՋՆԱԴԱՐՅԱՆ ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ ՏԵՂԻ ՈՒՆԵՑԵԼ Է ԿԱՊԻՏԱԼԻ ՆԱԽԱՍԿԶԲՆԱԿԱՆ ԿՈՒՏԱԿՈՒՄ

ԱՇՈՏ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ

Կապիտալի նախասկզբնական կուտակման պրոբլեմը քննարկելիս Մարքսը ելնում էր առկա կապիտալիստական տնտեսաձևի օրինաչափությունները վեր հանելու խնդրից։ Որչափ նա զբաղվում էր այդ խնդրով, բնական է, որ հետազոտեր ոչ միայն այդ տնտեսաձևի զարգացման պրոցեսը, այլև նրա ծագումը, այսպես կոչված կապիտալի նախասկզբնական կուտակման պրոբլեմը։ Իր «Բնության դիալեկտիկայում» Էնգելսը կատարեց նույնիսկ նախասկզբնական կուտակման շրջանի կուլտուրական վերնաշենքի, Ռենեսանսի, ուսումնասիրման հանճարեղ փորձը։

Կապիտալի նախասկզբնական կուտակումը Հայաստանում ուսումնասիրելու խնդիրը սկսվեց հակառակ ծայրից։ Հատկանշական է, որ մեզանում դրան ձեռնարկեցին ոչ թե միջնադարյան Հայաստանի պատմությամբ զբաղվող մարքսիստ-տնտեսագետները, այլ՝ հայ կուլտուրայի, գրականության ու փիլիսոփայության որոշ ուսումնասիրողներ։ Տրամադրված լինելով X—XIII դարերի հայ փիլիսոփայության մտքի կամ գրականության ու արվեստի հուշարձանները համարել Հայկական ռենեսանսի կամ Վաղ ռենեսանսի արտահայտություն՝ սրանք պահանջ էին զգում նաև որոնել կամ ավելի ճիշտ՝ լաստակերտել դրան սաղական սոցիալ-տնտեսական պատվանդան։ Այդ պահանջի արդյունքն էր, որ փորձեր արվեցին հայտնագործելու միջնադարյան Հայաստանում կապիտալիզմի սաղմնավորման և ֆեոդալիզմի քայքայման, այլ խոսքով կապիտալի նախասկզբնական կուտակման փաստեր։

Կապիտալի ծագման պրոցեսը, նրա նախասկզբնական կազմավորումը տարբեր երկրներում տեղի է ունենում պատմական տարբեր ժամանակաշրջաններում, ամեն անգամ ստանում տեղական կոնկրետ պայմաններին համապատասխանող երանգավորում, անցնում զարգացման տարբեր աստիճաններ կամ ցուցաբերում տարբեր հաջորդականություն։ Այսպես, հայտնի է, որ Արևմտյան Եվրոպայում ֆեոդալական իշխող ֆորմացիայի ընդերքում կապիտալիստական կացութաձևը կազմավորվում էր մի ժամանակ, երբ վաղուց արդեն վերացված էր ճորտատիրական իրավունքն ու գյուղացիության հողամրացված վիճակը։ Այլ պայմաններում կատարվեց կապիտալիզմի սկզբնավորումը Արևելյան Եվրոպայում։ Ինչպես Պրուսիայում, այնպես և Ռուսաստանում կապիտալիստական կացութաձևի կազմավորման պրոցեսը տեղի ուներ գյուղացիների հո-

դամբացման պրակտիկային զուգընթաց։ Այնուամենայնիվ բոլոր պարագաներում, ինչպես նշել է Մարքսը, կապիտալի կազմավորման պատմական պրոցեսը ամենուրեք ունեցել է նաև հիմնական ու կայուն հատկանիշներ։

Պարզ ապրանքափոխանակությունից կապիտալիստական արտադրությունն անցնելու համար անհրաժեշտ է երկու նախապայման. նախ այն, որ արտադրողները զրկված լինեն արտադրամիջոցներից և ապա այն, որ առկա լինի փողային հարստության այն կուտակումը, առանց որի հնարավոր չէ կապիտալիստական արդյունաբերության մեջ գործի դնել արտադրամիջոցներից զրկվածների բանվորական ուժը։

Եթե X—XIII դարերի Հայաստանի պայմաններում խոսք է լինում կապիտալիստական հարաբերությունների սաղմնավորման կամ կապիտալի նախասկզբնական կուտակման պրոցեսի մասին, ապա անհրաժեշտ է, որ այդ դարերի Հայաստանի կոնկրետ իրադրության մեջ ևս առկա եղած լինեին այդ երկու նախապայմանները։

Ի՞նչ իրադրություն էր իշխում իրոք այդ դարերի ընթացքում Հայաստանում։ Արդյոք երկրի տնտեսության վերընթաց պրոցեսն այդ դարերում հանգեցնո՞ւմ էր կապիտալի նախասկզբնական կուտակման ու ֆեոդալիզմի քայքայման, ինչպես ենթադրում են ոմանք. թե, ընդհակառակը, տեղի ուներ սոսկ ֆեոդալական փակ տնտեսության քայքայման և դեպի զարգացած ֆեոդալիզմը միտված այն պրոցեսը, որ պայմանավորված էր առևտրա-վաշխառուական հարաբերությունների զարգացմամբ։ Հայտնի է, որ այդ դարերում հասարակական աշխատանքի բաժանում էր կատարվում Հայաստանի գյուղի և քաղաքի միջև։ Քաղաքները, որոնք առաջ միայն ռազմական կամ վարչական կենտրոններ էին, դառնում էին արդյունագործության և առևտրի հանգույցներ, կուտակվող հարստության ու կուլտուրայի հանգրվաններ։ Գյուղատնտեսական մթերքների և քաղաքում արտադրած պրոդուկտների վաճառման համար ստեղծվում էր քաղաքային շուկա և հատուկ նշանակություն ստանում ապրանքաշրջանառության կարևորագույն լծակը՝ փողը։ Մի շարք քաղաքներ՝ Դվինը, Անին, Կարսը, Արծնը և այլն կարևորություն էին ստանում ոչ միայն որպես տեղական, այլև միջազգային առևտուրը հանդուցավորող շահաստաններ։ Ինչպես գրում էր XI դարի պատմիչ Լաստիվերտցին, սրանց հարստությունը կուտակվում էր «բազում ընչեղութեամբ ի ծովէ և ի ցամաքէ ամբարեալ», և սրանց առևտրականները անուն էին ստանում «ի մեջ աշխարհաց», դառնում մի տեսակ ապրանք գնող, «թագավորք ազգաց», ապրանքների վրա իշխող արքաներ։

Ֆեոդալիզմի զարգացման այս էտապում հին իշխողների կողքին հատուկ որակ ու կշիռ են ստանում քաղաքային արհեստավորությունը և առևտրա-վաշխառուական հասարակախավերը։ Հետզհետե նկատելի է դառնում մի կողմից քաղաքային մեծատոնների՝ պատրիցիատի, և մյուս կողմից քաղաքային ներքնախավի՝ պլեբսի առկայությունը։ Գյուղի և քաղաքի տարբերակման և բնակչության համապատասխան շերտավորման զուգընթաց՝ ֆեոդալական հասարակության ներսում դնալով խորանում է ֆեոդալական վերնախավերի դեմ հասարակական ներքնախավերի դասակարգային պայքարը. այս մասին բազմաթիվ վկայություններ կան նաև մեր հիշատակած Լասաիվերտցու մոտ։

Գյուղացիների և քաղքենի մասսաների պայքարը ուղղված էր աշխարհիկ ու հոգևոր ֆեոդալների և քաղաքաբնակ մեծատոնների դեմ։ Այդ պայքարը հատուկ կնիք էր դնում կուլտուրական կյանքի, ժողովրդական ստեղծա-

գործության և կրոնա-ազանդավորական շարժումների վրա։ Ձնայած տնտեսական կյանքը մտել էր զարգացման մի շրջան, որը սկզբնավորվող ֆեոդալիզմի համեմատությամբ ցույց է տալիս նկատելի վերելք և որակական տարբերություններ—քաղաքային կյանքի սկզբնավորման փաստը, քաղաքարնակչության կազմավորումը, նրա բախումները իշխող վերնախավերի հետ, աշխարհիկ մտահայեցության ծավալումը և այլն—այնուամենայնիվ, այս շրջանում չէր ստեղծվում տակավին նոր, բուրժուական կամ կապիտալիստական կացութաձև։ Միջնադարյան Արևմուտքում «պայքարելով ազնվականության դեմ՝ քաղաքային բուրժուազիան իր համար տեղ է նվաճում ֆեոդալական սիստեմի մեջ դարձյալ որպես արտոնյալ դաս»[1]։ Զարգացած ֆեոդալիզմի այս շրջանում ծավալվող պարզ ապրանքաշրջանառության պայմաններում նույն երևույթը տեղի ուներ նաև Հայաստանում։

Եթե մինչև X—XIII դարերը Հայաստանի ֆեոդալական հարաբերությունները զարգանում էին բնատնտեսական (այլ խոսքով՝ ֆեոդալական փակ տնտեսության) հիմքերի վրա, X—XIII դարերում, զարգացած ֆեոդալիզմի իրադրության մեջ, այսինքն պարզ ապրանքաշրջանառության ազդեցության տակ, սկսում են խախտվել, բայց դեռ չեն վերանում իսպառ այդ հիմքերը։

Հետևելով այսպես կոչված «հայկական ռենեսանսի» շուրջը տեղի ունեցող դիսկուսիաների ընթացքին, դժվար չէ նկատել, որ հաճախ թյուրիմացությունների աղբյուր է դառնում այն հանգամանքը, որ ոմանք խոսում են ֆեոդալիզմի քայքայման ու բուրժուական կամ կապիտալիստական հարաբերությունների «սաղմնավորման» մասին այնտեղ, ուր խոսք կարող է լինել միայն պրոդուկտների փոխանակման բնատնտեսական եղանակի և պարզ ապրանքաշրջանառության համատեղման մասին։ Անհեթեթություն է զարգացող ֆեոդալիզմը համատեղել քայքայվող ֆեոդալիզմի հետ։ Զարգացող ֆեոդալիզմը, պատմականորեն միայն ճանապարհ կարող է հարթել քայքայվող ֆեոդալիզմի առաջ։ Սակայն այդ դեռ իրավունք չի տալիս ի մի խառնելու կամ նույնացնելու ֆեոդալիզմի վերելքի և վայրէջքի ասպեկտները և ֆեոդալիզմի քայքայում որոնել այնտեղ, ուր փաստապես տեղի ունի միայն նրա զարգացումը։

Պարզ ապրանքաարտադրության պայմաններում ֆեոդալիզմը ոչ թե քայքայվում էր, այլ, ընդհակառակը, մտնում զարգացման իր բարձր շրջանը։ Բյուղում չէին խախտվել բնատնտեսության հիմքերը և դեռ իշխում էր տնային արտադրությունը։ X—XIII դարերում Հայաստանի գյուղացին շուկա էր հանում իր արտադրած կենսամիջոցների (հացի, բանջարեղենի, կաթնամթերքների, մսի, բրդի, կաշիների և այլն) ավելցուկները միայն։ Բյուղը դեռ չէր դարձել մանուֆակտուրային արտադրությանը սպասարկող շուկա։ Բյուղատնտեսության հետ որոշ կապ ունեցող ապահանքերն ու պղնձահանքերն անգամ մշակվում էին ֆեոդալական արդյունահանության պրիմիտիվ տեխնիկայով։ Երկրի արտադրողական ուժերի զարգացման ցածր աստիճանը տակավին չէր հասել կապիտալի նախասկզբնական կուտակման համար անհրաժեշտ աստիճանի։

Կապիտալի նախասկզբնական կազմավորումը կատարվում է առևտրավաշխառուական կապիտալի ծավալման և մանր սեփականատերերի բռնի ունեզրկման ճանապարհով։ Վերջին երկու պրոցեսների առկայությունը ան-

[1] *Կ. Մարքս* և *Ֆր. Էնգելս*, Избранные произведения, т. II, էջ 152 և հտ.։

հրաժեշտ է կապիտալիստական հարաբերությունների սաղմնավորման համար։ Սակայն միշտ չէ, որ այդ պրոցեսների առկայությունը հանգեցնում է կապիտալիզմի սաղմնավորման։

«Առևտրային և վաշխառուական կապիտալը,— գրում է Լենինը ձևակերպելով Մարքսի ուսմունքը,—պատմականորեն միշտ նախորդում են արդյունաբերական կապիտալի գոյանալուն և տրամաբանորեն այս գոյացման անհրաժեշտ պայմանն են հանդիսանում... բայց ինքնըստինքյան ո՛չ առևտրային և ո՛չ էլ վաշխառուական կապիտալը դեռ բավարար պայման չեն կազմում արդյունաբերական կապիտալի (այսինքն՝ կապիտալիստական արտադրության) առաջացման համար. դրանք միշտ չէ որ արտադրության հին ձևը քայքայում և տեղը արտադրության կապիտալիստական եղանակն են դնում. այս վերջինի գոյացումն «ամբողջովին կախված է զարգացման պատմական աստիճանից և տվյալ հանգամանքներից»[1]։

Հիրավի, ապրանքային արտադրություն, առևտրա-վաշխառուական կապիտալի ծավալում կամ մասսայական պատուպերացման պրոցես կար նաև անտիկ ստրկատիրության բարձր էտապում, այդ պրոցեսը դեռ բավական չէր «տրամաբանորեն» արդյունաբերական կապիտալի հանգելու համար։ Միայն ֆեոդալական հասարակության ընդերքում զարգացող մանուֆակտուրայի առկայությունն է, որ կարող է հանդիսանալ կապիտալիստական արտադրության պատմական և տրամաբանական անհրաժեշտ ելակետը։ Դիտել առևտրա-վաշխառուական կապիտալի զարգացումը, մասսաների ունեզրկումը կամ ապրանքաշրջանառության ծավալումը ինքյան արդեն որպես նախակապիտալիստական որևէ ֆորմացիայի քայքայման ու կապիտալիզմի առաջացման ստույգ նախանշան, կնշանակեր կրկնել պատմագիտության ցիկլիստական տեսության սխալները. ելնելով անտիկ աշխարհում զարգացած ապրանքաշրջանառության, առևտրա-վաշխառուական կապիտալի առաջացման և մասսաների պատուպերացման փաստերից, նրանք խոսում էին անտիկ կապիտալիզմի մասին, չնկատելով, որ անտիկ աշխարհում այդ պրոցեսները ընդառաջում էին ոչ թե կապիտալիզմին, այլ միայն՝ ստրկատիրության առավել սուր ու դաժան արտահայտություններին։ Նույնը պիտի ասել նաև եվրոպական ֆեոդալիզմի այն էտապի մասին, երբ բավական լայն ծավալ էին ստացել ապրանքաշրջանառությունը, առևտրա-վաշխառուական կապիտալի շրջանառությունը և մասսաների ունեզրկումը, առանց տակավին վերացնելու բնատնտեսության տիրապետող դերը և վերաճելու կապիտալիստական հարաբերությունների կազմավորման։ Մարքսը ցույց էր տալիս, որ գյուղացիների ունեզրկումը և հողերի կենտրոնացումը հարուստ կալվածատերերի ձեռներում հասցնում էր այն բանին, որ Հին Հռոմում հողերի մշակումը ազատ մարդկանց ձեռներից փոխանցվում էր ստրուկներին, իսկ Կարլոս Մեծի պետության մեջ գերմանական ազատ գյուղացիներին դարձնում ֆեոդալական կախում ունեցողներ և ճորտեր[2]։ Տարբեր իրադրություն չէր իշխում նաև միջնադարյան Արևելքի այն երկրներում, ուր առևտրա-վաշխառուական կապիտալի գործունեությունը տակավին չէր հանգել այն բանին, որ միջոցներից ունեզրկված արտադրողները շուկա հանեն իրենց աշխատուժը որպես ապրանք և կամ կապիտալիստի կողմից գնված այդ աշ-

[1] Վ. Ի. Լենին, Երկեր, IV հրատ., հ. III, էջ 215։
[2] Տե՛ս Կապիտալ, հ. I, էջ 759, ծան. 211։

խատուժը շահագործվեր արտադրության մեջ հավելյալ արժեք ստեղծելու համար։

Կապիտալի նախասկզբնական կուտակման բնորոշ կողմը այն չէ միայն, որ մանր արտադրողները կամ մանր սեփականատերերը զրկվում են իրենց ունեցվածքից, այլ որ «մարդկանց ահագին մասսաներ հանկարծակի ու բռնությամբ կտրվում են իրենց գոյության միջոցներից և աշխատանքի շուկա են նետվում որպես օրենքից դուրս հայտարարված պրոլետարներ»[1]։

Իհարկե կապիտալի նախասկզբնական կուտակման պրոցեսը չի կարելի նույնացնել կապիտալի կուտակման նորմալ պրոցեսի հետ. այս չի նշանակում սակայն, թե այդ պրոցեսները իրարից տարանջատված են դարերի անջրպետով, ինչպես այդ պատկերացնում են մեր տեսաբաններից ոմանք։ Նախասկզբնական կուտակման պրոցեսը ոչ միայն նախորդում է, այլև պատմականորեն միացողվում կապիտալի կուտակման, այլ խոսքով՝ կապիտալիստական արտադրության և վերարտադրության նորմալ պրոցեսի հետ։ Կապիտալիստական հարաբերությունների զարգացման ելակետը, Մարքսի ուսուցման համաձայն, բանվորի ստրկացումն էր։

«Այդ զարգացումը,— գրում էր Մարքսը,— բանվորի ստրկացման ձևափոխությունն էր, ֆեոդալական շահագործման փոխարկումը կապիտալիստական շահագործման։ Այդ զարգացման ընթացքը ըմբռնելու համար մենք կարիք չունենք շատ խորանալու անցյալի մեջ։ Թեև կապիտալիստական արտադրության առաջին սաղմերը սպորադիկ կերպով հանդիպում են արդեն 14-րդ և 15-րդ դարերում Միջերկրական ծովի առանձին քաղաքներում, բայց և այնպես կապիտալիստական դարաշրջանն սկսվում է միայն 16-րդ դարից»[2]։

* * *

X—XIII դարերի հայկական քաղաքների զարգացման և նույն այդ դարաշրջանի կուլտուրական կյանքի ու նրա վերելքի առանձնահատկությունները հասկանալու համար հարկավոր է հաշվի առնել, որ երկրում կուտակվող հարստության գլխավոր աղբյուրը շարունակում էր կազմել գյուղացիության ու արհեստավորության ֆեոդալական շահագործումը, նոր սրման հասցնելով գյուղացիության և քաղաքաբնակ մասսաների ֆեոդալիզմի դեմ ուղղված պայքարը, սակայն դեռ չստեղծելով ֆեոդալական արտադրաձևից տարբեր արտադրաձև և տենդենց չցուցաբերելով որևէ նոր արտադրաձևի սաղմնավորման։ Այդ դարերում Հայաստանում ֆեոդալիզմը ոչ թե մայրամվում էր, այլ մտնում իր զարգացման բարձր շրջանը։

Ապրանքաշրջանառության արծարծման այդ դարաշրջանում Հայաստանում կուտակվող հարստությունը բաժին էր ընկնում նախ և առաջ քաղաքներում ապրող ֆեոդալներին։ Զարգացող ապրանքաշրջանառությունը առաջին հերթին շուկա էր բացում սրանց ձեռքում կուտակված հավելյալ պրոդուկտների վաճառահանման համար։ Աշխարհիկ և հոգևոր ֆեոդալների, կալվածատերերի ու վանքերի համար հզոր խթաններ էին առաջանում ընդարձակելու իրենց տնտեսությունները, զավթելու գյուղահամայնքների հողարաժինները, սաստկացնելու գյուղացիների կեղեքումը՝ նրանց հավելյալ արտադրանքը

[1] Կ. Մարքս. Կապիտալ, հ. I, էջ 749 (ընդգծումը մերն է—Ա. Հ.)։
[2] Նույն տեղում, էջ 748 (ընդգծումը մերն է—Ա. Հ.)։

ավելի մեծ չափերով շուկա հանելու համար։ Առևտրա-վաշխառուական կապիտալն ու առևտրական միջնորդը հանդիսանում էին գյուղացու ֆեոդալական շահագործման լծակներ։ Ֆեոդալի հետ մեկտեղ նրանք հանդես են գալիս գյուղացու հավելյալ աշխատանքի արդյունքը կլանողների դերում։

XII դարի մատենագիր Կարապետ Սասնեցին թվարկում է այն վայելքները, որոնք իր դարաշրջանում պատեցնում են հարուստների գլուխը. նա հիշատակում է, ոսկին և արծաթը, ակունքն ու մարգարիտները, բեհեզներն ու կերպասները, թանկարժեք երիվարներն ու ջորիները, զենքերն ու չինական հանդերձանքները և մանավանդ ծաղկահոտ գինիներն ու արվեստավոր մատուռակները, քաղցրաձայն տավիղներն ու քնարները, գողտրիկ կերակուրները և այլն. Սասնեցին նշավակում էր իրեն ժամանակակից ֆեոդալներին, որոնք «ագահում էին, նենգում, կաշառում, պարտվում ոսկու կարմրությունից ու արծաթի պայծառությունից, ականց և կերպասների բազմազանությունից»[1]։

Ֆեոդալական պատերազմները, ավարառումները, հափշտակումներն ու գեղծարարությունները եկամուտի աղբյուր էին դառնում ֆեոդալների մի մասի և սնանկության պատճառ՝ նրանց մյուս մասի համար։ Նույն դերն էին կատարում քաղաքներում կենտրոնացած զորքերի մատակարարումը, հարկահավաքումները, մաքսագանձումները, հանքերի գիշատիչ շահագործման կամ շինարարությունների հետ լծորդված կապալային գործարքները, կալվածների, քարվանսարաների, տների, կրպակների վարձակալությունը, անասունների, ստրուկների և ռազմագերիների գնումն ու վաճառահանումը, ի վերջո վաճառահանման առարկա էին դառնում ֆեոդալներին պատկանած գյուղեր, քաղաքներ և բերդեր։

Զարգացած ֆեոդալիզմը լիակատար հասունացման մեջ էր մանավանդ Կիլիկյան Հայաստանում և նրան սահմանամերձ հայաբնակ վայրերում։ Սակայն այստեղ ևս առևտրա-վաշխառուական կապիտալը գործիք է դառնում ոչ թե կապիտալիստական, այլ ֆեոդալական հարստության կուտակման։

Իր քարոզների մեջ Վարդան Այգեկցին, թվարկելով իշխող զրկանքների ու կեղեքումների բուն աղբյուրները, գրում էր. «ի կրպակս և ի հրապարակս, ի վաճառանոցս և ի շուկայս, ի կապանս և ի մաքսատունս. ի զուր տուգանս և ի կիցս ճանապարհաց, ի դողութիւնս և ի կաշառս, ի վաշխս, ի վարաց մշակաց, ի չափս և ի կշիռս, ի ճշտավաճառութիւնս»[2]։

Քարոզիչը դատապարտում է վաշխառուներին, «որ տան դահեկանս ի ժամանակս նեղութեան վասն հացի և գինւոյ» և կամ որ «զհայրենիքս աղքատաց առնեն գրավական և պահեն»[3]։ Նա նշավակում է նաև անաշխատ մաքսավորությունը. «զի ի ժամ աշխատելոյ չէ ի միջի և կա նստեալ ի կիցս ճանապարհաց և լրբութեամբ բաժին խնդրէ յանցաւորաց»[4]։ Կեղեքելով հարստահարության բոլոր աղբյուրները — «և մաքսն ու վաշխն, և կաշառն և զուր տուգանելն և որ ոչ տայ վարձ մշակին», նա ասում է, թե՝ «է սոցա հաւասար և ճշտավաճառն և որ զչափ կամ քան զկշիռն նվազագոյն բռնէ»[5]։

---

[1] Կարապետ Սասնեցի, Նեբրոզեան ս. Մեսրոպայ, Վաղարշապատ, 1897, էջ 21 և հտ.։
[2] Հայկական ՍՍՌ Մատենադարան, ձեռ. № 8356, էջ 48բ և 49ա։
[3] Նույն տեղում, ձեռ. № 1880, էջ 324։
[4] Նույն տեղում, էջ 325։
[5] Նույն տեղում, էջ 329։

Ի՞նչն է հատկանշական այս թվարկումների մեջ. Այդեկցին շեշտում է ապրանքավաճառի և ապրանքաշրջանառության հետ կապված այն շարաշահումները, որոնք հատուկ են վաշխառուական կապիտալին։ Նա խոսում է գույքերի ու կալվածների հափշտակման մասին, որոնք փոխում են ոչ թե հասարակության ֆեոդալական կացութաձևի արտադրահարաբերությունները, այլ սոսկ ֆեոդալ սեփականատերերի անձնակազմը։

«Քանզի,— գրում է Այդեկցին,— ջանամք և հնարեմք ազգի-ազգի կերպարանաւք և արուեստիւք, գիտնականք ու տգէտք, առաջնորդք և ժողովուրդք, ժողովեմք զինչս և փարթամանամք։ Եւ զոչեմք ասելով, թէ իմ սեփական հայրենիք և զաւառս, քաղաքս, գեաւղս, աղարակս, անդաստանս, դրախտս, այգիս, տունս և ասա ջանամք և յափշտակեմք յաղքատացն և յարեմք տուն ի տունս մեր և անդաստան յանդաստանս մեր։ Եւ աստուածարար զաւշաքաղութեամբ շրջեմք ի մեջ աղքատացն, և ահաւոր ձայնիվ դողացուցանեմք զնոսա, զրկելով և նեզելով և ի ժամ յայն կարծեմք ի միտս մեր, թէ մեք ոչ եմք ի հողոյ կամ ծնունդք ախտի և այնպես շարժեմք զգլուխս մեր և սիգալով քայլեմք և կարծեմք, թէ յամպս հասանէ թիկունք և պարանոց մեր»[1]։ Սուր գրչով շարադրված այս տողերը գրվել են թաթարական արշավանքների նախօրեին։ Այս արշավանքները ոչ թե փոխեցին ֆեոդալիզմի զարգացման ուղղությունը, այլ հաղորդեցին նրան ավելի դաժան, ավելի վայրագ ու դիշատիչ բնույթ։

X—XIII դարերում Հայաստանում և Կիլիկիայում չենք տեսնում կապիտալիզմի առաջացման տենդենցներ։ Վերը արձանագրված մեր փաստերի մեջ բացակայում է կապիտալի նախասկզբնական կուտակման որևէ նախանշան։ Կապիտալի նախասկզբնական կուտակման դարաշրջանում, ֆլամանների երկրում, կամ Անգլիայում ֆեոդալ փոդատերերը ունեզրկում էին մանր գյուղացիներին և նրանց վարելահողերը դարձնում ոչխարների արոտավայրեր՝ գործարաններին բուրդ մատակարարելու համար. մեկանում, ընդհակառակը. մանր արհեստագործության վրա հանդչող քաղաքների հետ կապված հայ կալվածատերերն ու վանականները, հարստանալու մոլուցքով բռնված հափշտակում էին համայնքապատկան հողերը, նրանց հաշվին իրենց կալվածքների սահմանները ընդարձակելու համար։

Սակայն սրտնով գյուղական համայնքների մեջ մտնող գյուղացիները չէին ազատվում ֆեոդալական կապանքներից։ Ի տարբերություն արևմտաեվրոպական իրադրության, նրանք շարունակում էին կապված մնալ ֆեոդալների սեփականություն դարձած հողին և երբեմն նույնիսկ հողամրացվելով որպես ճորտեր, ենթարկվում սանձարձակ ճնշման ու կեղեքման։ Ճիշտ է, գյուղատնտեսության մեջ այդ ժամանակ հանդիպում են վարձու մշակներ, սակայն սրանց աշխատանքը սեզոնային, պատահական և օժանդակ բնույթ ուներ։ Մշակների վարձը կտրող աղարակատերերը չէին դառնում կապիտալիստ ֆերմերներ։

Փոդային-ապրանքային հարաբերությունները այդ շրջանում ընդգրկում էին ոչ թե արտադրական, այլ փոխանակային հարաբերությունների ոլորտը։ Գյուղի և քաղաքի միջև կար արդեն աշխատանքի բաժանում և ապրանքափոխանակություն, սակայն արտադրողները վաճառքի էին հանում ոչ թե իրենց աշխատուժը, այլ իրենց աշխատանքի արդյունքը։ Ֆեոդալական տնտեսու-

[1] Հայկական ՍՍՌ Մատենադարան, ձեռ. № 8356, էջ 52ա—52բ։

թյունը կապված էր երկրի արտաքին և ներքին շուկաների հետ, սակայն ապրանքա-փողային հարաբերությունները չէին փոխում ֆեոդալական շահագործման բնատնտեսական բնույթը: Երկրի կալվածատիրությունը հանգչում էր արտատնտեսական ճնշման ենթարկվող ճորտ գյուղացիների շահագործման վրա։ Փողային կամ աշխատավճարային ռենտան (կոռը) իշխող գեր չէին կատարում ֆեոդալի եկամուտի մեջ։ Ճիշտ է, այս շրջանում ֆեոդալական հողատիրությունը զգալի չափերով վերաճում էր ֆեոդալական կալվածատիրության, այսպես կոչված ազարակային տնտեսության, ուր մեծ տեղ պիտի ունեցած լինի ճորտերի աշխատանքը և աշխատավճար ռենտայի կուտակումը։ Սակայն ֆեոդալի եկամուտը շարունակում էր կազմված լինել ճորտ կամ կախյալ գյուղացիներից մթերվող արգյունավճար ռենտայից կամ ռենտայի ձև ստացած պարենհարկից։ Ֆեոդալի հողային հարստությունը մեծապես կուտակվում էր ճորտ կամ կախյալ գյուղացիներից ստացած հացահատիկների, կաթնամթերքների, բամբակի և այլ արդյունքների գանձումով։ Այս տեսակետից ևս խոշոր տարբերություն ենք նկատում մեր և եվրոպական երկրների միջև, ուր զարգացած ֆեոդալիզմի շրջանում գերակշռում էր փողային ռենտան, թեպետև մի շարք երկրներում, ինչպես Պրուսիայում և Ռուսաստանում, գերիշխող նշանակություն էր ստանալու աշխատավճար ռենտան (Frohnarbeit, барщина)։

X—XIII դարերի Հայաստանում և Կիլիկիայում մեր բնութագրած իրադրությունը հատկանշում է հարստահարության այն եղանակը, որին Մարքսը «աշխատության ասիական ձև» էր կոչում։ «Ասիական ձևերի ժամանակ աշխատությունը,—գրում էր նա,—կարող է շատ երկար ժամանակ հարատևել՝ առանց որևէ ուրիշ բան առաջ բերելու, բացի տնտեսական անկումից կամ քաղաքական ապականությունից։ Լոկ այնտեղ և այն ժամանակ միայն, որտեղ և երբ առկա են արտադրության կապիտալիստական եղանակի մնացյալ պայմանները, աշխատությունը հանդես է գալիս իբրև արտադրության նոր եղանակի կազմիչ միջոց, մի կողմից՝ ֆեոդալ իշխաններին և մանր արտադրողներին ավերածության ենթարկելով, մյուս կողմից՝ աշխատանքի պայմանները կենտրոնացնելով և նրանք կապիտալի վերածելով»[1]։

Հայաստանում և Կիլիկիայում առևտրա-աշխատանքային կապիտալը նպաստում էր ֆեոդալական ագարակների ծավալմանը, սակայն չէր փոխում տնտեսության ֆեոդալական եղանակը, չէր առաջացնում նրա ներսում որակապես նոր արտադրահարաբերություններ, չէր վերածում ֆեոդալական արտադրաեղանակը բուրժուական արտադրաեղանակի։ Փողային հարաբերությունները մեծ չափերով զարգանում էին շնորհիվ տրանզիտային առևտրի, չաճեցնելով հին արտադրահարաբերությունների հեղաշրջմանը ընդառաջող պայմաններ։ Ներքին առևտուրը ազդակներ էր սնում գյուղացիության կեղեքումը սաստկացնելու, սակայն դարձյալ չէր փոխում հարկադրանքի ու կենսեմման հին, բնատնտեսական, ֆեոդալական հիմքերը։

Այն փաստը, որ ինչպես գրում է Լաստիվերտցին, մեծատունները գրավ էին վերցնում կամ հափշտակում տնակից աղքատների տունը, այգին, վարելահող, կամ անասունները, դեռ էական նմանություն չունի այսպես կոչված կապիտալի նախասկզբնական կուտակման ժամանակ տեղի ունեցող զավթումների (огораживание-ի) հետ։ Լաստիվերտցու վկայությունից հետևում է

[1] Կ. Մարքս, Կապիտալ, Երևան, 1949, հ. III, II մաս, էջ 139 և հտ.։

միայն այն, որ XI դարում Բյուզանդիային սահմանամերձ հայկական մարզերում տեղի էր ունենում «հզորների» կողմից «խեղճերի» կամ «աղքատների» հողազրկման ու գույքազրկման այն պրոցեսը, որը շատ լավ հայտնի է մակեդոնական դինաստիայի կայսրների օրենսդրական ակտերից[1]։ Գյուղացիների մասսայական հողազրկման ու գույքազրկման փաստն ինքյան դեռ նշան չէր կապիտալի նախասկզբնական կուտակման։ Կապիտալի նախասկզբնական կուտակման ժամանակ Արևմտյան Եվրոպայում գյուղացիների ունեզրկումը ոչ միայն վերջ էր դնում նրանց համայնքային կամ մասնավոր հողատիրությանը, այլև նախապայման դառնում նրանց ազատագրման և կապիտալիստական շահագործման ենթակա բանվորական ուժի գոյացման։ Ճորտերի ֆեոդալական շահագործման լիկվիդացումով Անգլիայում ֆեոդալ ազնվականությունը վերածվեց բուրժուական հողատիրության, որի հարստության աղբյուրը կապիտալիստական հողային ռենտան էր։

Այլ բնույթ ուներ և այլ հետևանք ունեցավ գյուղացիների ունեզրկման փաստը Հայաստանում։

X—XIII դարերում Հայաստանի վանական կամ աշխարհիկ կալվածատիրությունը ագրարային տնտեսության բնույթ էր ստանում մեծապես հենց գյուղական համայնքների ունեզրկման ճանապարհով։ Սակայն ներկա դեպքում արտադրամիջոցներից պոկ գալը գյուղացի արտադրողներին չէր դնում գյուղական բանվորների վիճակում։ Գյուղացիների կողմից հողից պոկ գալը ֆեոդալական դաժան շահագործման կամ գյուղացիների խստաշար հողամրացման դեմ ցույց տրվող սոցիալական դիմադրության հետևանքներից մեկն էր և ոչ մի կերպ կապված չէր այսպես կոչված «կապիտալի նախասկզբնական կուտակման» հետ։ Հայտնի է, որ տակավին Մ. Խորենացին էր գանգատվում «ժառանգությունից» փախչող գյուղացիների մասին։ Սակայն ոչ ոք չի կարծում թե պատմահայրը աչքի առաջ ուներ դրանով մի երևույթ, որ նախապատրաստում էր Հայաստանում ծայր առնող կապիտալի նախասկզբնական կուտակման սկզբնավորությունը։ Հայտնի է դարձյալ, որ թաթարների օրոք ևս Հայաստանի և Իրանի գյուղացիները մասսայաբար լքում էին իրենց բնակավայրերն ու ցանքադաշտերը՝ այսինքն պոկվում էին իրենց արտադրամիջոցներից։ Բայց չարաչար թյուրիմացություն կլիներ ենթադրել, թե գյուղացիների այս փախուստը նախադրյալներ էր առաջացնում նոր արտադրահարաբերությունների կազմավորման համար։ Հայտնի է, որ անմիջական արտադրողը միայն այն ժամանակ է հնարավորություն ստանում տնօրինելու իր անձը, երբ դադարում է նրա ամրացումը հողին և նրա ճորտական կախումը ֆեոդալից։ Մեզ զբաղեցնող դարերում Հայաստանի համար բնորոշը ոչ թե հողազավթումների կապիտալիստական պրակտիկան էր, կամ գյուղացու ազատագրումը ֆեոդալական կապանքներից, այլ, ընդհակառակը, գյուղացու ֆեոդալական հողամրացումը, նրա անձնական ազատության ֆեոդալական կաշկանդումն ու նրա ֆեոդալական կեղեքման սաստկացումը։ Ֆեոդալական եկամտի գլխավոր մասն այս շրջանում շարունակում էր լինել ռենտան, որի ընդհանուր չափը հիմնականում որոշվում էր ոչ թե ֆեոդալական ագարակների ծավալով, այլ ֆեոդալական կախման մեջ գտնված գյուղական մանր տնտեսությունների քանակով, որոնց մի մասը սկսում էր ենթարկվել բռնի ճորտագրման։

[1] Տե՛ս В. Васильев, Труды, Л., 1930, էջ 251 և հտ.։

Ոմանց մոլորության մեջ է ձգել այն փաստը, որ XII—XIII դարերում մեզանում կատարվում էին ոչ միայն կանոնագրքերում և քարոզգրքերում դատապարտված վաշխառուական ակտեր, այլև բանկային տիպի առևտրա-ֆինանսական գործողություններ, ինչպես մուրհակների զեղչում, չեկերով կատարվող փոխանցումներ և այլն։ Հիրավի, արդեն իսկ X դարում ոչ միայն Առաջավոր, այլև Միջին Ասիայում փողային վճարումների համար բանեցվում էին չեկեր։ «Այդ ժամանակ,— գրում է Մ. Յակուբովսկին,— հարկ չկար, որ (ճանապարհ գնալիս) մեծ գումար վերցնես հետդ։ Կարելի է որևէ քաղաքում փողը տալ վստահարժան մի սառաֆի և վերցնել դրա դիմաց վկայաթուղթ-չեկ, որի համաձայն նշանակված տեղում կարող ես լիովին ետ ստանալ հանձնածդ գումարը»։ Ինքը «չեկ» բառն իսկ փոխառություն է պարսկերենից, ուր այդ ժամանակ մեր իմաստով էլ այն գործածվում էր[1]։

Նման երևույթներ անշուշտ կային նաև միջնադարյան Հայաստանում։ Մասնավորապես բանկային չեկերի առկայությունը դիտված է Կիլիկյան հայ թագավորության ժամանակ[2]։ Ոչ միայն «մուրհակ», այլև «չեկ» բառի իմաստն ուներ «բարաթ» (փոխանակագիր) տերմինը։ XVII—XVIII դարերում առևտրական քարվանսարա ուներ և չեկային օպերացիաներ էր կատարում նույնիսկ Էջմիածնի վանքը։ Այս մասին ուշագրավ նյութեր կան Աղանյանի հրատարակած «Դիվան հայոց պատմության» հատորներում։ Կարելի է նույնիսկ ենթադրել, որ ինչպես Միջին Ասիայում, մեզ զբաղեցնող դարերում Հայաստանի կամարակապ փնդուկները (=պանդոկները կամ քարվանսարաները) ևս կատարում էին ոչ միայն հյուրատների, այլև թաղածածկ շուկաների և առևտրական բորսաների դեր։ «Քարվանսարաները,— գրում է մեր հիշատակած Յակուբովսկին Միջին Ասիայի մասին խոսելիս,— մանավանդ աշխույժ միջակայաններում, վայրեր էին, ուր կարելի էր կատարել առևտրականին հետաքրքրող ապրանքների վաճառումներ ու գնումներ և որ գլխավորն է, իմանալ առևտրական վերջին նորությունները և ամենից առաջ՝ ապրանքագները։ Քարվանսարաները շահաբեր ձեռնարկություններ են նրանց տերերի համար։ Ահա թե ինչու քարվանսարա ունենալու ձգտում էին ոչ միայն առևտրականները, այլև խոշոր հողատեր-ֆեոդալները[3]։

Պիտի դիտենք դարձյալ, որ այս կարգի փաստերը ևս ընդգրկում են ոչ թե զարգացած ֆեոդալիզմի արտադրական, այլ փոխանակային հարաբերությունների ոլորտը։ Դրանք պատկանում են այն երևույթների շարքին, որոնք ցույց են տալիս ոչ թե այն, թե արտադրական ինչպիսի՞ հարաբերություններ էին իշխում երկրում կամ ի՞նչ նոր կացութաձև էր սաղմնավորվում այդ ժամանակ, այլ միայն այն, թե ի՞նչ ձև էին ընդունում արտադրանքի առևտրական փոխանակությունը, բանկային վճարումները և այլն։ Ինքյան առնված բանկային գործողությունները դեռ չեն հատկանշում հասարակության իշխող կացութաձև։ Բանկային գործողություններ տեղի ունեին ինչպես հին ստրկատիրական հասարակությունների, այնպես նաև միջնադարյան ֆեոդալիզմի, նորադարյան կապիտալիզմի և մերօրյա սոցիալիստական կացութաձևի տիրապետության ժամանակ. դրանք ինքյան դեռ չեն կարող հիմք ծառայել այս կամ այն արտա-

[1] „История народов Узбекистана", Ташкент, 1950, I, էջ 228։
[2] *Г. Микаелян*, История Киликийского армянского государства, 1952, էջ 18։
[3] „История народов Узбекистана", I, էջ 229։

դրաեղանակի հատկանշման և մասնավորապես՝ նշան համարվել կապիտալի նախասկզբնական կուտակման առկայության։

Կապիտալի նախասկզբնական կուտակման շրջանի առավել աչքի ընկնող ներկայացուցիչների մասին խոսելիս հաճախ հիշատակում են Զաքարյանների ժամանակ ապրած Հոնենցին, մոնղոլների ժամանակ անուն հանած Ումեկին ու նրա որդիներին կամ նույն այդ ժամանակ ապրած Սահմադինին ու Շնորհավորին՝ հանձնարարելով սրանց որպես իրենց դարաշրջանի մեծափարթամ «բուրժուաների»։ Արձանագրելով այս կարգի մեծատունների ձեռներում նյութական միջոցների կուտակման փաստը, ոմանք ենթադրում են, թե մտնելով հասարակական շրջանառության մեջ, այդ միջոցները զարկ են տալիս «ոչ միայն ապրանքների արտադրության, այլև այն հարաբերությունների վերարտադրության, որոնք ապրանքային արտադրության ծնունդ են» (Զալոյան)։ Մթագնած այս բանաձևը հաշվի չի առնում այն իրողությունը, որ «ապրանքային արտադրությունը» կարող է միատեղվել ոչ միայն կապիտալիստական, այլև ստրկատիրական, ֆեոդալական և նույնիսկ սոցիալիստական հարաբերությունների հետ։ Նման բանաձևից կառչողները վերջակետ են դնում այնտեղ, ուսկից հետազոտողի առաջ ծայր է առնում բուն պրոբլեմը. այսինքն՝ ապացույցներ այն մասին, որ հասարակական զարգացման ընթացքը հանգեցնում էր ոչ թե զարգացած ֆեոդալիզմին, այլ կապիտալի նախասկզբնական այն կուտակման, որ նախադուռ էր հանդիսանում զարգացած ֆեոդալիզմի հատկանշող պարզ ապրանքաշրջանառությունից տնտեսության կապիտալիստական եղանակին անցնելու համար[1]։

Պատմական փաստերի սառնարյուն վերլուծությունը նրանց կարող է հանգեցնել միայն այն եզրակացության, թե նախընթաց դարերի հայ ֆեոդալներից X—XIII դարերի մեծատունները տարբերանշվում էին միայն նրանով, որ գյուղացիներին ճնշողի ու հարստահարողի, կեղեքողի վիճակին հասնում էին ոչ թե սրի, այլ փողի միջնորդությամբ։

Համաձայն մարքսիստական ուսմունքի, ֆեոդալիզմի «բացասումը», նրա «քայքայումը» ծայր է առնում կապիտալիստական հարաբերությունների սկզբնավորումից։ Սակայն ընկ. Զալոյանը այս հարցում ունի այլ տեսակետ։ Ֆեոդալիզմը բացասելու, այն քայքայելու համար բավական է, որ իր ոսկին հորելու տեղ մեկը կալվածներ ձեռք բերի, քաղաքներ գնի հնչուն եկամուտ դանձելու նպատակով։ Ընկ. Զալոյանի կարծիքով Սահիր Դիվանը որպես նման տիպի մի մեծատուն, ինքյան արդեն «կապիտալ» էր կուտակում և նպաստում մոնղոլների ժամանակ իշխած ֆեոդալական այն կարգերի բացասման, որի առավել կարկառուն ներկայացուցիչներից մեկն էր հենց ինքը, մեծափարթամ

[1] Այստեղ հարկ չենք համարում կանգ առնել հակադիտական այն մանիպուլյացիաների վրա, որոնց դիմում է հարգելի պրոֆ. Վ. Զալոյանը բանաձիգ մեջբերումներ անելով մեր աշխատություններից։ Այնտեղ, ուր մենք խոսում ենք X—XIII դարերի Հայաստանում ֆեոդալական փակ տնտեսությունների մեջ սկսված քայքայման և առևտրա-փոխանակային կապիտալի կուտակման հիման վրա զարգացող ֆեոդալական նոր հարաբերությունների մասին, պրոֆ. Զալոյանը աճապարում է եզրակացնելու, թե ուրեմն, մենք ևս համամիտ ենք «կապիտալի նախասկզբնական կուտակման» և «ֆեոդալիզմի քայքայման» իր տեսությանը։ (Տե՛ս Հայկական ՍՍՌ ԳԱ Տեղեկագիր (հաս. գիտ., 1958, № 11, էջ 106—108)։ Կարծում ենք, վատ սփոփանք պիտի լինի պրոֆ. Զալոյանի համար, եթե փաստերի և մտքերի դիտական ճշտման փոխարեն միայն նման մանիպուլյացիաներով պիտի ապացուցվի անհնարելի իր տեսության ճշտությունը։

այդ մեծատունը, Սահիբ-Դիվանը։ Փույթ չէ, որ այդ մեծատունը գործադրում էր գնած կալվածները և իր կուտակած դրամը ոչ թե կապիտալիստական եղանակով, այսինքն արտադրության միջոցների համակենտրոնացման, վարձու աշխատանքի մասսայական շահագործման, այլ իր ձեռք բերած նորանոր քաղբենի հպատակների կամ իրեն «հայրենիք» դարձած կալվածքներին գամված գյուղացիների ֆեոդալական սանձարձակ հարկման ու կեղեքման ճանապարհով։ Ընկ. Զալոյանը անգիտանում է, որ կալվածքներ, գյուղեր, ագարակներ, ավաններ ու քաղաքներ գնող այս տիպի մեծատունները ոչ միայն չէին քայքայում կամ բացասում ֆեոդալիզմը, այլ իրենց փողի «ներդրումներով» և սոցիալ-տնտեսական իրենց ամենօրյա պրակտիկայով միայն նպաստում և սպասարկում էին ֆեոդալական հարաբերությունների վերարտադրմանն ու դրանց հետագա զարգացմանը։

Հայտնի է, որ XIII դարի հայ մեծատուններից մեկն էր Հոնենցը. Ումեկը, Սահմադինը, Քարիմադինը ու Շնորհավորը հանդիսանում էին վրաց թագավորներից, Ոսկե Հորդայից կամ էլխաններից հովանավորված հարկահաններ, դիվանագետներ կամ այլ տիպի հանձնակատարներ։ Նույն տիպի մեծատուն էր նաև նշանավոր Սահիբ Դիվանը, որ վարում էր Հուլավու խանի հիմնադրած մոնղոլական մեծ պետության ամենազոր վարչապետի դեկը։ Վերհիշենք Ֆրիկի պարզ վկայությունը.

Սահիպ Դիւանին ասենք,
Որ մըլքեց պերկիր նա բոլոր.
Հանցեղ սիասաթ ունէր
Որ չունէր ոչ որ թագաւոր.
Զինչ որ խանոյայր կային,
Յափն ունէր զինչ ըզմի խնձոր...

Առևտրա-վաշխառուական կապիտալի բարեկեցությունը հանգչում էր շահագործման ֆեոդալական ռենտայի յուրացման վրա։ Բռնելով ասպարեզից հեռացող հայ ժառանգական ֆեոդալների տեղը՝ պարոնացած մեծատունները հպատակեցնում էին գանձագին կալվածների ու ագարակների, քաղաքների ու ավանների բնակիչներին և հաճախ նույնիսկ ճորտագրում կամ սարկացնում այդ վայրերի ազատ աշխատավորներին։ Այնտեղ, ուր կազմակերպվում էր ագարակային խոշոր կալվածատիրական տնտեսություն, կիրառվում էր գյուղացիների պարհակային աշխատուժը։ Հայաստանի նվաճողների աչքում այս մեծատունները ստանալով նորելուկ ֆեոդալների ու վասալների արտոնություններ, նույնիսկ ավելի վստահելի էին, քան երկրի հին ժառանգատերերը։

XIV դարի վերջերին և XV-ի սկզբներին Մաթեոս Ջուղայեցին այս կարգի մեծատուններին «նորափառ» անուն էր տալիս։ «Նորափառ կոչի,—գրում է նա,—որ հանկարծակի դիպեալ ինչից նոր փառս ընդունի յընչիցն և ոչ է բնական ի հայրենեացն»[1]։ Իրենց կենցաղով ու հագուստ-կապուստով սրանք ոչնչով չէին տարբերվում հայրենատեր ֆեոդալներից. նրանց պես լվանում էին և օծում իրենց գլուխները, կոկում միրուքները, հագնում բեհեզ ու ծիրանի, բանեցնում մետաքսե թաշկինակ, կանայք շպարվում սնգուրով ու սպիտակադեղով։ Մի այլ տեղ խոսելով «մեծատունների» մասին, նույն հեղինակը գրում էր. «Մեծա-

[1] Հայկական ՍՍՌ Մատենադարան, ձեռ. № 6607, թ. 55բ։

տուն ոչ զմեծ և արձակ տունն ասե, այլ փարթամութիւն ընչիցն, որ հարուստ էր ոսկով և արծաթով, հացով և գինւով և այլն, զի ոչ ուներ յազգն պակասութիւն. այլ ծաղկեալ էր ուստերօք և դստերօք, ծառայիւք և սպասաւորօք և այլն։ Պակասութիւն ինչ ոչ ունէր ոչ յինքն և ոչ ի վաճառսն, ոչ ի յելն և ոչ ի մուտն, ոչ ի պտղաբերն և ոչ յանասունս...»։ Այսպիսի մեծատուններից մեկն էր, ասում է Գր. Տաթևացին, որ արհամարհում էր աղքատ Ղազարի վիշտը, «ուտէր և ըմպէր ինքն առատ. հպարտութեամբ շրջէր ի մէջ քաղաքին, պերճացեալ և փառաւորեալ և որպես զգազան զոմանս տանջէր, զոմանս զրկէր և յափշտակէր և ամենքն երկնչէին ի նմանէ»[1]։

Պարզ է, որ ոչ փողային հարստության տեր դարձող հայ հին, տոհմային ֆեոդալները և ոչ էլ առևտրա-վաշխառուական կապիտալի սանդուղքներով նրանց հաջորդած, ագարակների ու կալվածների տիրացած մեծատունները, ուղիներ չէին հարթում կապիտալիստական բուրժուազիայի առաջ։ Հասարակական այդ վերնախավերի մասին իր ուժի մեջ է մտնում այն դրույթը, որ պաշտպանում էր Մարքսը վաշխառուական կապիտալի մասին խոսելիս։ «Պարտքերով ծանրաբեռնված ստրկատերը կամ ֆեոդալ սենյորը... վերջիվերջո իր տեղը զիջում է վաշխառուին, որ ինքը դառնում է հողատեր կամ ստրկատեր, ինչպես հեծյալները Հին Հռոմում։ Հին շահագործողի տեղը, որի շահագործումն ավելի կամ պակաս չափով նահապետական էր, հանգես է գալիս մի խստասիրտ, փողատենչ նորելուկ։ Բայց ինքը՝ արտադրության եղանակը չի փոխվում»[2]։

* * *

Դիտենք վերջապես X—XIII դարերում քաղաքային ներքնախավերի զարգացման պատկերը։

Ոմանք առաջ են քաշում սխալ այն դրույթը, թե Հայաստանի քաղաքներում X—XIII դարերի ընթացքում նկատելի դարձած պլեբսի (чернь-ի) առկայությունը ինքյան արդեն նշան էր ֆեոդալիզմի բացասման։ Այս դեպքում ևս անգիտացվում է, որ քաղքենի պլեբսի առաջացումը ինքյան դեռ նշան չէր «ֆեոդալիզմի» բացասման, անտիկ քաղաքների պլեբսի առկայությամբ դեռ չէր բացասվում անտիկ ստրկատիրությունը. այդպես նաև միջնադարյան պլեբսի առկայությունը դեռ չէր բացասում ֆեոդալիզմի տիրակալությունը։ Սխալ է նաև ոմանց այն կարծիքը, թե միջնադարյան քաղաքների պլեբսը հանդիսանում էր ժամանակակից պրոլետարիատի «նախորդը», քանի որ միայն միջնադարյան պլեբսը չէր համալրում ժամանակակից պրոլետարիատի շարքերը։ Հայտնի է, որ մեծ չափով ժամանակակից պրոլետարիատի շարքերը համալրում էին գյուղհամայնքների մանր այն արտադրողները, որոնք կախման մեջ ընկնելով կապիտալիստական ֆերմերներից, կապալառուներից, սկսում էին աշխատել վերջիններիս սեփականություն դարձած արտադրամիջոցներով որպես վարձու բանվորներ։ Հայտնի է դարձյալ, որ ժամանակակից պրոլետարիատի շարքերը համալրվում էին նաև քաղաքային մանր արտադրողների հաշվին։ Սկսելով աշխատել բացառապես առևտրական միջնորդների պատվերներով ու արտադրա-

[1] Հայաստան ՍՍՌ Մատենադարան, ձեռ. № 1261, Ա. 324ա։
[2] Կ. Մարքս, Կապիտալ, հ. III, մաս II, էջ 139։

միջոցներով, հաճախ նրանք ևս բռնում էին վարձու բանվորներ դառնալու ուղին։ Հարկավ երբեմն տեղի էր ունենում նաև դեմքնթաց պրոցես. «հաջողակ» արհեստավորը երբեմն դառնում է կապիտալիստական ձեռնարկող, իսկ նրա երբեմնի արհեստանոցը՝ կապիտալիստական ձեռնարկության կայան։ Զարգացման և՛ մի, և՛ մյուս պրոցեսը անհամատեղելի էր դառնում արհեստավորական համքարությունների հարատևման հետ։ Ե՛վ բանվորը, և՛ ձեռնարկողը պետք է ազատ լինեին համքարության կապանքներից, համքարական կանոնադրության նեղիչ պայմանականություններից։ Կապիտալի նախասկզբնական կուտակումը Արևմտյան Եվրոպայում անխուսափելիորեն առաջ բերեց համքարությունների քայքայում ու կազմալուծում։

Միանգամայն այլ դրություն էր իշխում X—XIII դարերի Հայաստանում։ Մանր արհեստագործությունը և դրան սպասարկող համքարությունները գտնվում էին ոչ թե քայքայման ու անկման, այլ ծաղկման ու վերելքի շրջանում։

Նկարագրելով հարյուր հազարից ավելի բնակիչ ունեցող Արծնի ավերումը, XI դարում Մատթեոս Ուռհայեցի պատմիչը ասում էր, որ այդ քաղաքում կուտակված էր ոսկու, արծաթի և դիպակների հսկայական հարստություն[1]։ Դրժբախտաբար պատմիչը չի պարզում, թե ում ձեռներով էր գործվում դիպակը, որի վաճառքը դառնում էր հնչուն հարստություն կուտակելու միջոց։ Կարևորն այն չէ դարձյալ, որ XIII դարում Հայաստանում գործվում էր բեհեզ, որի որակը համբավում էր աշխարհատես ուղեգիր Մարկո-Պոլոն[2], այլ այն, թե ո՞վ և ինչպե՞ս էր արտադրում այդ ապրանքը։ Ի՞նչ էր բեհեզ արտադրողը, համքարային արհեստավո՞ր, թե վարձու բանվոր։ Ի՞նչ էր բեհեզի վաճառահանողը՝ միջնորդ առևտրակա՞ն, թե արդյունաբերական կապիտալիստ։ Վաճառում էր նա արհեստավորներից զնա՞ծը, թե՞ մանուֆակտուրային իր ձեռնարկության մեջ գործված ապրանքը։ Կարճ՝ ինչպե՞ս էր տեղի ունեցել բեհեզի արտադրության համար անհրաժեշտ բանվորական ուժի և արտադրամիջոցների միացումը։ Այս է էականը։

Որոշ պատասխան այս հարցերին տալիս է Մարկո-Պոլոն, երբ նշում է, որ Մուշի և Մարդինի մոտերքում արտադրվում է մեծ քանակությամբ բամբակ, որից մեծ մասով պատրաստվում են բեհեզ և այլ կտորեղեններ և որ այդ վայրերի բնակչությունը արհեստավորներ են ու առևտրականներ և ամենքը թաթար թագավորի հպատակներ։ Այս վկայությունից ակներև է աշխատանքի հասարակական այն բաժանումը, որ տեղի ուներ բամբակ արտադրող գյուղի և այն մշակող ու վաճառահանող քաղաքի միջև։ Այնտեղ, ուր արհեստավորը բամբակը չէր գնում գյուղացուց անմիջապես, կամ այնտեղ, ուր արհեստավորը չէր արտադրում գյուղացու պատվերով, գյուղացու և արհեստավորի արանքում տեղ էր գրավում միջնորդ առևտրականը։ Վերջինս կարող էր նպաստել կապիտալիստական արտադրության առաջացման, եթե նա միջամտեր արտադրական պրոցեսին և արտադրող արհեստավորը դառնար տնայնագործ բանվոր։ Սա կապիտալիստական մանուֆակտուրայի սաղմնավորման էտապը կլիներ հենց։

Հիմք կա՞ ընդունելու, թե մեզ զբաղեցնող ժամանակաշրջանում Հայաստանի արհեստավորները նման կախում ունեին տեղական վաճառահանողներից։

---

[1] Ս. Ուռհայեցի. *Ժամանակագրութիւն*, Վաղարշապատ, 1898, էջ 103։
[2] *Марко Поло*. Путешествие. М., 1940, էջ 68։

Առաջին հայացքից կարող է թվալ, թե նման կախման մասին է վկայում Շնորհալին, երբ «Յիսուս Որդի»-ի մեջ, դառնալով աստծուն, ասում էր.

Որք ի կշիռ տուր և առին
Զվաճառականքն խաբեցին
Յարդարամէտ քո կըշռին
Բազմապատիկ պահանջեսցին,
Որք յաշխարհի գործ արուեստին
Առ ի յոսկւոյ կամ արծաթին
Եւ կամ այլ ինչ նիւթեղենին,
Տեարք նիւթոցրն նենգեցին
Հատուցանեն անդրեն նոցին
Ի քոյդ արդար դատաստանին։

Ի՞նչ իրավիճակ է պարզում այս վկայությունը։ Այն, որ առևտուր անելիս ոմանք թերակշռելով խաբում են գնորդին և որ երբեմն արհեստավորը նենգում է պատվիրատուից ստացած նյութը, որի համար և բանաստեղծը պատիժ է սպառնում նենգողներին վերջին դատաստանի օրը։ Ինավ չի երևում, որ ներկա դեպքում խոսքն այն պատվիրատուի մասին է, որը հումույթի դիմաց պիտի արտադրանք ստանար արհեստավորից՝ շուկա հանելու համար։ Խոսքը պարզապես թերակշռված ապրանքավաճառի և այն արհեստավորների մասին է, որոնք մշակում էին սպառողի հումույթը։

Սմբատ Գունդստաբլի «Դատաստանագրքում» ասված է՝ «Արուեստաւոր, որ ղումեք վարձ առնու, որ իրք շինէ կամ կապալով բան այնէ, ու չայնէ, հայնց ցէդ, որ պոմանն լինայ, ու չհաճեցնէ զինք, կամ դարձնէ զվարձն և զնիւթն, զոր առել լինայ ի լման, և նա զիր վարձն ըստ արժանոյն դատաւորին տեսովն առնու»[1]։

Այստեղ ևս խոսք չկա միջնորդ առևտրականի նյութը մշակողի մասին։ Խոսքը վարձով կամ կապալով աշխատող այն արհեստավորների մասին է, որոնք աշխատում էին պատվիրատուի համար, որ կարող էր լինել նաև արտադրանքի անմիջական սպառողը։

«Զմրան քարոզների» վերջվածքում Տաթևացին բաղձանք է հայտնում, որ լինի «արհեստաւորաց ընդ երկրազործացն անխարդախութիւն և առատ շահաւորութիւն»։ Այստեղ հեղինակը աչքի առաջ ունի ոչ թե վաճառականի և արհեստավորի, այլ վերջինիս և գյուղացիների փոխհարաբերությունները։ Միայն գյուղացու մատակարարած նյութի յուրացումի համար չէ, որ Տաթևացին նշավակում է ջուլհակին, հյուսնին կամ դարբնին, որ «զրկի վարձն կամ գողանա ի նիւթոյն»[2]։ Խոսքն այն արհեստավորների մասին է սոսկ, որոնք յուրացնում են սպառող պատվիրատուի նյութը կամ կտրում աշակերտների ու ենթավարպետների վարձը։ Հետաքրքրական է, ի դեպ, որ դարբնի և հյուսնի կողքին հիշատակվում է ոստայնանկը (ջուլհակը)։ Ակներև է, որ Ֆլորենցիայում կամ Ֆլամանների մոտ իշխող դրության հակառակ՝ մեզանում Տաթևացու ժամանակ ոստայնանկները արդյունաբերական բանվորներ չէին, այլ դարբինների և հյուսների պես սեփական արտադրամիջոցներով գործող մանր արհեստավորներ։

[1] Տե՛ս Սմբատ Սպարապետի Դատաստանագիրք, Երևան, 1958, էջ 146։
[2] «Զմրան քարոզներ», էջ 117։

Շուկայի հետ ունեցած հարաբերություններով գեռ լիովին չի լուսաբանվում արհեստավորների վիճակը, նրանց պատմական զարգացման աստիճանը։ Արհեստավորության պատմական զարգացման ցուցանիշներից մեկը ֆեոդալական կապանքներից ազատագրվելու համար արհեստավորության մղած պայքարի աստիճանն է։ Կան տվյալներ, որ XI դարում նման պայքար էր մղում Անիի աշխատավորությունը։ Թերևս նման պայքար տեղի էր ունենում նաև այլ վայրերում, որի հետևանքով քաղաքաբնակչությունը հասնում էր հարկերի ու տուրքերի որոշ թեթևության, իջեցնում կամ բարձրացնում շուկայի գները և այլն։ Այնուամենայնիվ ոչ մի տեղ չեն արձանագրվում քաղաքաբնակչությանը հատկացված կոմունալ ինքնավարության, սեփական դատարանների կամ այլ իրավունքների մասին։ Հայ միջնադարյան քաղաքների ավագանին (որին գիտնականներից ոմանք, թվում է թե սխալմամբ Երիցանի անունն են տալիս), ոչ թե կոմունալ, այլ ֆեոդալական դասային կազմակերպություն էր։ Աւագանի, աւագմ, աւագ որեար, խորհրդականմ արքայի նշումները հանդիպում են արդեն հայ վաղ ֆեոդալական շրջանի մատենագիրների՝ Ագաթանգեղոսի և Փարպեցու մոտ։ Ավելի կարևոր է, որ XIII դարում աղբյուրները հաստատում են արհեստավորական եղբայրությունների և դրանց հետ կապված երիտասարդական մարտական կազմակերպությունների առկայությունը։ Սակայն տիպական միջնադարյան նման կազմակերպությունները ևս ոչ մի տեղ բուրժուական զարգացման ընդառաջող պայքարի հենակետ չէին դառնում։

Չի կարելի անտեսել միջնադարյան Հայաստանում ստրուկ արհեստավորների առկայությունը։ Արհեստավորների ստրկացումը կապ ունի գերեվարության ու գերեվաճառքի հետ։ Շահ Արմենների ձեռքից ազատելով Անին, Գիորգի III-ը 40 հազար դահեկանով (գնեաց ի հեծելին զգերեալ ծառայսն Անտոյ քրիստոնիա և այլ ազգի »,—գրում է վրաց պատմիչը։ Շահ Արմեններից գնած գերիներով թագավորը հեղեղեց Թբիլիսիի շուկան, ուր դրանցից յուրաքանչյուրը ծախվում էր 40 դահեկանով[1]։ Աչքի առաջ ունենալով բյուզանդական ժամանակամերձ պրակտիկան, ենթադրում ենք, որ ստրուկ արհեստավորները բանեցվում էին քաղաքային արհեստանոցներում[2]։ Անհամեմատ ավելի մեծ ծավալով արհեստավորների ստրկավարումը տեղի ունեցավ XIII դարում, թաթարների օրոք։ Արհեստավորները ստրկագրվում էին, տրվում զինվորականների կամ խանական ցեղին պատկանող ֆեոդալների տրամադրության տակ կամ բանեցվում ռազմական նպատակների ծառայող գործատներում («քյարխանաներում»)[3]։ Ստրկական «քյարխանաներն» աշխատում էին հատուկ վերակացուների հսկողության տակ։ Առանց աշխատանքի որոշ բաժանման չէ, որ կազմակերպվում էր ռազմական պետքերի ծառայող այս ձեռնարկությունների արտադրությունը։ Հասկանալի է նաև, որ արտադրության համար պետք եղած հումույթները պիտի մատակարարեր ինքը պետությունը։ Դրանով, իհարկե, չէր փոխվում վերջինիս ֆեոդալական էությունը։

Արհեստավորների ստրկացման մի այլ աղբյուրը ըստ երևույթին նրանց անվճարունակությունն էր։ Մոնղոլների ժամանակ հարկատուները խոշտանգ-

[1] *Brosset*. Histoire de la Georgie, I, livr. II. էջ 387։

[2] Сборник материалов по социально-экономической истории Византии, М., 1951, էջ 138։

[3] *А. М. Беленецкий*. К вопросу о социальных отношениях в Иране („Советское востоковедение", V, էջ 123 և հետ.)։

վում էին հարկահանների գելոցներով։ Նրանց կրնկակոխ հետապնդում էին կապալառուները և վաշխառուները։ Անվճարունակ գյուղացիները բռնում էին գաղթականության ուղին կամ, գամված նախկին բնակավայրերին, ստիպված ստրկության էին վաճառում իրենց տղաներին ու աղջիկներին։

Պետության և ֆեոդալների հանդեպ մանր արհեստավորները ունեին գյուղական մանր տնտեսատերերի նկուն վիճակը։ Արհեստավորների ճորտագրման հետքեր կարելի է գտնել անգամ XVI—XVII դարերում՝ Իրանում և Թուրքիայում։ Գյուղացի և քաղաքացի կռռվոր արհեստավորներ կամ սեպագործ բանողներ էին մասնավորապես բերդերի շինությամբ զբաղվածները։ Շարդենի վկայության համաձայն՝ արհեստավորության մեծ մասը պետական տուրքեր էր վճարում կռռով։ Աշխատավճար կամ արդյունավճար ռենտայի ձևով էր կուտակվում խամ այն մետաքսը, որ արտահանվում էր Իրանից կամ վերամշակվում տեղում՝ պետական կամ մասնավոր գործատներում՝ մեծ չափով իրանահայ խոջաների ձեռքով վաճառահանվելու համար։ Մեր աղբյուրների մեջ[1] այդ գործարանները կապիտալիստական տնային արդյունաբերության, կապիտալիստական մանուֆակտուրայի բնույթ կրելու մասին որևէ նշույլ անգամ չկա։

Միայն շահ Թահմասպի վարչության վերջում (այսինքն 1570-ական թվականներին) ստրկական աշխատանքի վրա հանգչող իրանական մանվածագործությունը դիջեց իր տեղը համքարությունների մեջ կազմակերպված ազատ արհեստագործությանը[2]։ Եվրոպական ուղեգիրների նկարագրություններից ևս ակներև է, որ իրանական լավագույն կերպասները արտադրվում էին ազատ արհեստավորների գործատներում։ Սպահանի հայ խոջաների ընկերության ներկայացուցիչները 1666—67 թվականներին ռուս արքունիքին հայտնում էին, որ կանխիկ փողի վերածելով իրենց ապրանքը, դրա մի մասը իրենք իսկ գործադրում են արտահանության համար խամ մետաքս գնելու, մյուս մասը կանխավճարումներով արհեստավորներին պատվեր տալու համար։ Դժբախտաբար այստեղ ոչինչ չի ասված արհեստավորների սոցիալական վիճակի մասին. արդյոք հայ խոջաների հետ կապված ազատ արհեստավորնե՞ր էին, թե իրանական ֆեոդալներից կախում ունեցող ճորտ արհեստավորներ, հայտնի չէ[3]։

Հայտնի է այնուամենայնիվ, որ XVIII դարի սկզբներին իրանական մանվածագործներից ոմանք տեղափոխվում էին Աստրախան և Մոսկվա։ Բայց անգամ Ռուսաստանում XVIII դարի մետաքսագործ ձեռնարկությունները ճորտատիրական մանուֆակտուրաներ էին կամ դարձյալ՝ մասնավոր արհեստանոցներ։ Կային այսպես կոչված պոսեսիոն գործարաններ, ուր բանում էին 1721 թ. ցարական ուկազով այդ ձեռնարկություններին ամրացված գյուղացիներ։ Ձեռնարկություններ էին դրանք, որոնք ոչնչով չնպաստեցին ոչ մետաքսագործության տեխնիկայի զարգացման, ոչ էլ արտադրող ձեռքերի որակավորման։ Կապիտալիստական ձեռնարկությունների հետ դրանք ընդհանուր ոչինչ չունեին, և ընդհանուր քիչ բան ունեին կապիտալիստական շրջանի բանվորների հետ նաև նման ձեռնարկներին ճորտագրված բանվորները։ Զմոռանանք Լենինի խոսքերը՝ «Այն ժամանակ, ճորտատիրական իրավունքի պայմաններում, խոսք

[1] Այստեղ նկատի ունենք V. Minorsky'-ի հրատարակած Tadhkirat al-Muluk, London, 1943, աշխատությունը։

[2] И. П. Петрушевский, Очерки по истории феодальных отношений в Азербайджане и Армении в XVI—начале XIX вв., Ленинград, 1949, էջ 65 և 138։

[3] „Армяно-русские отношения в XVII в.", I, Ереван, 1953, էջ 51։

անգամ չէր կարող լինել ճորտ, իրավազուրկ, «ստորին», «սև» դասի ընդհանուր մասսայից բանվոր դասակարգի առանձնացման մասին»[1]։

Հայաստանի պայմաններում զարգացած ֆեոդալիզմը ընկրկեց ոչ թե կապիտալիզմի, այլ սելջուկ-թուրքմենական, մոնղոլ-թաթարական կամ թուրքիրանական ֆեոդալների կիսանոմադական-կիսաֆեոդալական օտարատիրություններ առաջ։ Հայկական ֆեոդալիզմը ոչ թե քայքայվեց, տեղ տալով ավելի բարձր արտադրաձևի, այլ դիմեց անկման ու վայրէջքի՝ ասպարեզ տալով արտադրության պրիմիտիվ եղանակներին։

Եթե սելջուկների, մոնղոլների, մամլուկների և թուրքերի նվաճումներն Արևմուտքում խթաններ էին առաջացնում առևտրական նոր ուղիների հայտնագործման և դրան նպաստող մի շարք դյուտարարությունների, որոնք վերջին հաշվով դարկ տվին աշխարհային պետությունների, ազգային ու միջազգային շուկաների հանգուցավորման, պատմական նույն գործոնները XI—XIV դարերում կազմալուծման էին հասցնում հայկական ընտանեկան Կիլիկիայի հայ ֆեոդալական տիրույթները։ Ոչ հայ Բագրատունիները, ոչ Արծրունիները, ոչ էլ Ռուբինյաններն ու Հեթումյանները չկարողացան ստեղծել համազգային շուկա կամ կազմակերպել այդ շուկան պաշտպանող ազգային կենտրոնացած պետականություն։ Խաչակիրների միջոցով զգալապես ընդարձակվեցին Կիլիկիայի միջազգային կապերը։ Բայց խաչակիրները և նրանցից ժառանգություն մնացած հայ-արևմտաեվրոպական կապերն ու ազդեցությունները վնասեցին Կիլիկիայի հայ պետականության զարգացմանը և վերջին հաշվով արագացրին նրա կործանումը։ Այդ պրոցեսը միանգամից չկատարվեց։ Պիտի կարծել, որ սկզբնապես սելջուկների ու մոնղոլների կազմակերպած ընդարձակ տերությունները, վերացնելով տեղական մանր իշխանությունները կամ սեղմելով նրանց իրավասությունների սահմանները, նվաճված երկրներում մի հայտնի չափով նույնիսկ նպաստեցին հաղորդակցության և առևտրի զարգացմանը։ Ռազմական մատակարարումների՝ և հարկային կապալների ծավալումը սատարեց առևտրա-վաշխառուական տարրերի նյութական ուռճացմանը, սպառնալից չափերի հասցնելով փոդի և հոդի սեփականությունը մեծատունների ձեռքերում կենտրոնանալուն։ Մտաբերենք, որ հենց այս ժամանակ էին ապրում Ումենի ու Սահմադինի, Շնորհավորի ու Սաֆիր Դիվանի պես փոդատեր ու հոդատեր մեծատուններ։

Զարգացման այս ընթացքին սկզբնապես համապատասխանում էր նաև նախընթաց շրջանում սկսված կուլտուրական վերելքի ուղղությունը։ Այսպես կոչված «Հայկական վերածնությունը» ներկայացնող Սարկավագն ու Շնորհալին ապրում և գործում էին սելջուկների, Ֆրիկն ու Կոստանդին Երզնկացին— մոնղոլների տիրապետության ժամանակ։ Բայց վերջին հաշվով ակներև է, նաև բացասական խոր այն ներգործությունը, որ ունեցավ սելջուկների ու մոնղոլների տիրապետությունը ոչ միայն Հայաստանի, այլև ամբողջ Առաջավոր Ասիայի տնտեսական ու կուլտուրական կյանքի վրա։ «Բավական են պարզ պատահականություններ, ինչպես ժողովուրդների ներխուժումներ կամ նույնիսկ սովորական պատերազմներ, որպեսզի արտադրողական զարգացած ուժեր և պահանջմունքներ ունեցող որևէ երկիր զրված լինի ամեն ինչ նորից սկսելու

[1] Վ. Ի. Լենին. IV հրատ., հ. 20, էջ 397։

անհրաժեշտության առաջ»,— գրում էին Մարքսն ու Էնգելսը[1]։ Այս ճշմարտությունը իր ուժի մեջ է մնում նաև միջնադարյան Հայաստանի և Առաջավոր Ասիայի նկատմամբ։ Հարկավ, այդ երկրներում ծայր առած տնտեսական ու կուլտուրական անկումը ոչ միայն նվաճողների տիրապետության արդյունքն էր, այլև սոցիալական չհաղթահարված այն հակասությունների հետևանքը, որոնք սրվում էին Հայաստանում և Առաջավոր Ասիայում X—XIII դարերի ընթացքում։

Ղազան խանի ժամանակ, XIII դարի վերջերին և XIV դարի սկզբներին, անգամ մոնղոլ նվաճողները գլխի ընկան, որ գյուղական տնտեսության գիշատիչ կեղեքումը հարվածի տակ է դնում ամբողջ երկրի և վերջին հաշվով նույնիսկ նրա իշխողների բարեկեցությունը։ Գյուղացիների մասսայական արտագաղթը արժեքազրկում էր լքած հողերը, դրանք անեկամտաբեր դարձնում պետության և ֆեոդալների համար։ Ղազան խանը ձեռնարկեց մի շարք ռեֆորմների, որոնք նպատակ ունեին կասեցնելու գյուղացիների փախուստը։ Նույն կարգի ռեֆորմներ XIII դարի վերջերից և մինչև XIV դարի կեսերը ձեռնարկվում էին նաև էլխաններին հպատակ հայկական մի շարք վայրերում։ Սակայն նման ձեռնարկումները չկասեցրին երկրում ծայր առած տնտեսական գլխիկոր վարէջքը։

Ջավթելով գյուղացիների հողերը՝ Արևմուտքում նախասկզբնական կուտակման կատաղի ասպետները կազմակերպում էին կապիտալիստական գյուղատնտեսություն, կապիտալիստական ոչխարաբուծություն և այլն։ Ունեզրկված գյուղացիները պանդխտում էին քաղաք և վաճառքի հանում իրենց աշխատուժը կապիտալիստական արդյունաբերության կոնդոտյերներին։ Հակառակ երևույթ էր իշխում մեզանում. գյուղացիները փախչում էին երկրից, մատնվում պանդխտության, սակայն պանդուխտների լքած վայրերում նախադրյալ չէր ստեղծվում կապիտալիստական հարաբերությունների առաջացման համար։ Արհեստագործության անկումը ընդառաջում էր ոչ թե տեղական, այլ դրսի կապիտալիստների շահերին. հետագայում տեղական արդյունագործության անկումը պայմանավորված էր ոչ միայն վաչկատուն ֆեոդալիզմի գիշատիչ կեղեքումներով, այլև արևմտաեվրոպական կապիտալի ներգործությամբ։ Երկրի արտադրողական ուժերի քայքայումը և ֆեոդալական անարխիայի սաստկացումը ճանապարհ էին հարթում նրա գաղութացման առաջ։

* *

Մեզանում ոմանք տրամադիր են եղել X—XIII դարերում Հայաստանում արծարծվող «աղանդավորական շարժումները» դիտելու որպես կապիտալի նախասկզբնական կուտակման ժամանակ Արևմտյան Եվրոպայում տեղի ունեցած ռեֆորմացիայի նախօրինակ։ Հայտնի է, որ ռեֆորմացիայի ժամանակ տեղի էին ունենում ոչ միայն ժողովրդական մասսաների, այլև եկեղեցական կալվածքների հափշտակման պրոցեսներ. ռեֆորմացիայի հետևանքով կաթոլիկ եկեղեցին զրկվում էր իր հողերի, ունևոր հարկատուների և գյուղացիներից ստանալիք տասանորդների մի մասից։ Կանգ առնելով անգլիական ռեֆորմացիայի վրա, Մարքսը գրում էր. «Վանքերի և այլ հիմնարկների ոչնչացումը նրանց բնակիչներին դարձրեց պրոլետարներ։ Բուն եկեղեցական կալվածների

[1] *Կ. Մարքս* և *Ֆր. Էնգելս*, Сочинения, IV, էջ 45։

մի խոշոր մասը արվեց թագավորական գիշատիչ ֆավորիտներին կամ շնչին գնով ծախվեց սպեկուլյանտներին, ֆերմերներին ու քաղաքացիներին, որոնք հին ժառանգական վարձակալներին մասսայորեն վտարում էին այդ կալվածներից ու նրանց տնտեսությունները միացնում էին»[1]։

Ակներև է, որ հողային սեփականատիրության վիթխարի այս օտարումները վերջին հաշվով ձեռնտու էին ոչ թե գյուղացիների հաշվին ապրող աշխարհական կամ եկեղեցական ֆեոդալներին, այլ բուրժուազիային։ Սրա շահերին էր ընդառաջում աշխատավոր մասսաների ունեզրկումը և բանվորական պահեստագնդերի գոյացումը։ Վերհիշենք նաև այն տողերը, ուր Մարքսը գծագրում է այս դարաշրջանի ընդհանուր պատկերը.

«Եկեղեցական գույքերի կողոպտումը, պետական հողերի խաբեբայական օտարումը, համայնական գույքերի հափշտակումը, որ կատարվում է ուզուրպացիայի և անողոք տեռորիզմի միջոցով, ֆեոդալական սեփականության ու կլանների սեփականության փոխարկումը արդի մասնավոր սեփականության,— սրանք են նախասկզբնական կուտակման բազմազան իդիլիական մեթոդները։ Այդ ձևով հաջողվեց նվաճել դաշտը կապիտալիստական հողագործության համար, հողը հանձնել կապիտալի իշխանությանը և օրենքից դուրս հայտարարված պրոլետարիատի անհրաժեշտ հոսանք ստեղծել քաղաքային արդյունաբերության համար»[2]։ Միանգամայն տարբեր իրողություններ էին կատարվում X—XIII դարերի Հայաստանում, ուր ընդհակառակը, ընդարձակվում էին վանական կալվածների սահմանները, սաստկանում գյուղացիների ֆեոդալական կախումը եկեղեցուց, աճում վանքերի և եկեղեցիների՝ գյուղացիներից ու քաղաքացիներից գանձվող եկամուտները։ X—XIII դարերի հայ աղանդավորական շարժումները ուղղված էին հենց եկեղեցու հարստահարչական սաստկացած այս տենդենցների դեմ։ Միանգամայն անտեղի են այդ շարժումները արևմտաեվրոպական ռեֆորմացիայի հետ համադրելու ուղղությամբ մեզանում ձեռնարկված փորձերը։ X—XIII դարերի հայ աղանդավորական շարժումները որևէ կապ չունեին կապիտալի նախասկզբնական կուտակումը հատկանշող արևմտաեվրոպական ռեֆորմացիայի հետ։

«Իրարու զարմանալիորեն նման, սակայն պատմական տարբեր միջավայրում տեղի ունեցած անցքերը,— գրում է իր նամակներից մեկում Մարքսը,— հասցնում են մեկը մյուսից միանգամայն տարբեր արդյունքների։ Դրանցից ամեն մեկն առանձնապես ուսումնասիրելուց և իրար հետ համեմատելուց հետո, հեշտ է գտնել այդ երևույթներն ըմբռնելու բանալին, բայց երբեք էլ չի կարելի հասնել դրանց ըմբռնմանը, ամենուրեք առաջ քաշելով պատմա-փիլիսոփայական որևէ տեսության միևնույն ագռավուկը (отмычка), որի ամենամեծ արժանավորությունը դրա գերպատմականությունն է»[3]։

Կասկած չկա, որ պատմա-փիլիսոփայական նման ագռավուկների շարքին կարելի է դասել հակապատմական այն գրույթը, որի համաձայն միջնադարյան Հայաստանում որպես թե առկա էր կապիտալիստական հարաբերությունների առաջացման և ֆեոդալիզմի քայքայման «տենդենց», կատարվում էր կա-

[1] Կ. Մարքս, Կապիտալ, հ. I, էջ 753 և հտ.։
[2] Կ. Մարքս, հ. I, էջ 766։
[3] *К. Маркс* и *Ф. Энгельс*, Письма, 1932, էջ 311։

պիտալի նախասկզբնական կուտակում՝ նախապայմաններ ստեղծելով Հայկական ռենեսանսի կամ Վաղ ռենեսանսի առաջացման համար։

Արևելքի և հատկապես Մերձավոր Արևելքի ժողովուրդներն իրենց մասնակցությունն են ունեցել արևմտա-եվրոպական ֆեոդալիզմի անկման և կապիտալիզմի առաջացման նախապատրաստման մեջ և յուրովի ազդել այդ երկրներում ծաղկած Ռենեսանսի կամ Վաղ ռենեսանսի վրա։ Այնուամենայնիվ ֆեոդալիզմի անկման և կապիտալիզմի առաջացման օրրանը հանդիսացավ Արևմուտքը։ Որչափ իր հերթին Ռենեսանսի կամ Վաղ ռենեսանսի բեղմնավորումը տեղի էր ունենում հենց նոր կազմավորվող կապիտալիստական հարաբերությունների գետնի վրա, հասկանալի է, որ նրա օրրանը ևս պիտի որոնենք դարձյալ Արևմտյան Եվրոպայում և ամենից առաջ՝ իտալական քաղաքներում։

Կուլտուրական յուրահատուկ այն վերելքը, որ ապրեցին Հայաստանը X—XIII դարերի ընթացքում և Միջին ու Առաջավոր Ասիայի և Անդրկովկասի երկրները, որևէ կասկած չվերցնող պատմական իրողություն է։ Պատմական այդ իրողությունը համապատասխանում էր սոցիալ-տնտեսական խոր այն տեղաշարժերի բնույթին, որ ապրեցին այդ ժամանակ այդ երկրները, մնալով զարգացած ֆեոդալիզմին հատուկ օրինաչափությունների շրջանակներում։ Պատմաքննական անկողմնակալ ու աննախապաշար ապագա հետազոտությունները պիտի կարողանան ակներև դարձնել, որ այդ դարերում Հայաստանի և հարևան երկրների փիլիսոփայության, գիտության, արվեստի և գրականության մեջ չի կատարվել որևէ հեղաբեկում, որ զարգացած ֆեոդալիզմի պայմաններում այս կամ այն չափով կատարված չլիներ նաև Արևմուտքում՝ նախքան այդտեղ կսաղմնավորվեր կապիտալիզմը կամ նախքան այդտեղ ծայր կառներ կապիտալի նախասկզբնական կուտակումը։ Բոլոր պարագաներում այդ երկրների զարգացման մեջ տեղի չի ունեցել որևէ շրջադարձ, որի լուսաբանության համար հարկ լիներ ընդունել սաղմնավորվող կապիտալիզմի, քայքայվող ֆեոդալիզմի կամ որևէ դեսակի ռենեսանսային մտահայեցողության միջամտությունը։ Իտալական բազմաթիվ ճիշտ այն դիտողությունները, որ արված են մինչ այսօր միջնադարյան Հայաստանում կատարված գրական և կուլտուրական նկատելի հեղաբեկումն ու վերելքը բնութագրելու համար, հնարավոր պիտի լինի հավաստել և ընդունել առանց զգալու Հայկական վաղ կամ ուշ ռենեսանսի առկայության կարիքը կամ առանց ենթադրելու կապիտալի նախասկզբնական կուտակման ներգործությունը։

ИМЕЛО ЛИ МЕСТО ПЕРВОНАЧАЛЬНОЕ НАКОПЛЕНИЕ КАПИТАЛА В СРЕДНЕВЕКОВОЙ АРМЕНИИ

АШОТ ИОАННИСЯН

(Резюме)

На этот вопрос пытались дать положительный ответ некоторые исследователи, ставящие себе задачу подвести некую «материальную основу» под гипотезу о «Ренессансе» или «Раннем ренессансе», имевшем якобы место в развитии Армении X—XIII вв.

Автор настоящей статьи показывает, что как бы ни заслуживала внимания упомянутая спорная гипотеза, выдвигаемое для ее подкрепления предположение об имевшем место в ту эпоху в Армении процессе так называемого «первоначального накопления капитала» находится в резком противоречии не только с марксистской концепцией этого процесса, но и не подтверждается фактами социально-экономической истории средневековой Армении.

По мысли автора, хотя в X—XIII вв. Армения и вступила в период развитого феодализма, характеризуемого возникновением дифференциации между городом и деревней, развитием товарного хозяйства и образованием бюргерства, в ней все же не происходили процессы, сигнализирующие наступление перехода к капиталистическому укладу хозяйства и связанного с этим начала разложения феодализма. В этот период мы не наблюдаем явлений, без наличия коих не может быть речи о так называемом «первоначальном накоплении капитала», не мыслимом без экспроприации собственников средств производства и превращения последних в наемную рабочую силу.

Конкретные данные исторических источников, использованных автором, показывают, что рост торгово-ростовщического капитала зачастую приводил лишь к сосредоточению части феодальной земельной собственности в руках обладателей денежного мешка и усиления эксплуатации насиженного на этой собственности трудового крестьянства.

Не было сдвигов и в сторону зачатия капиталистических отношений также и в развитии городского ремесла. Взамен усиления элементов наемного труда, в этой области наблюдаются явления, свидетельствующие о наличии порабощения и закрепощения трудящихся, привлечении к трудовой повинности организованных в цеховых объединениях ремесленников. Явления эти особенно становятся заметными в эпоху сельджуков и монголов. Однако начавшийся при монголах резкий хозяйственный упадок страны до некоторой степени явился результатом непреодоленных социальных противоречий в жизни Армении X—XIII веков.